



ԲԱԺԱՆՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՈՐԾԻ ԿՈՄԻՏԵ

Ուղարկողի համար	
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Անկախի համար	
Տարեկան	3 Ֆր.
Վեցամսեայ	1.50 »
ՎԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵԼԻ	

Մասնագրան սուր առաջին երեսին համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ կ. երեսին ան ի անգլաներու համար 20 Օլո գեղջ կրայ:

Ուղարկողի համար ձեռքի (Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

# ՇԱՐՈՒՄ

ՄԱՐՏԻ ԱՉԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԱԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ  
 Оггворникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

«Charjom»  
 Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի (Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

## ՍՐԲՈՒԹԻՆԸ ԱՂՏՈՏ ՁԵՌՔԵՐՈՒՄ

Սեր մէջ աղտոտները բազմաթիւ են. աղտոտ ամեն բանով, մինչեւ ոսկրների ծուծը: Բայց տեսէք թէ զրանք որչափ անպատկառ են որ մաքրութեան և աղնութեան ճատագոյններ են դառնում յանկարծ, բայց կրկին աղտոտ նպատակներով, կրկին ցածութիւն գործելու համար:

Մի Արթին փաշա ազգասէր է ներկայանում, այնչափ որչափ թոյլ կը տան Սուլթանի գաղտնի հրամանները, իսկ այնուհետեւ պատրաստ է նոյնիսկ լրտեսական խուճր կազմել...

Յեղափոխական կազմակերպութեան ապրանքը պահող մի ցած անհատ զոյուծիւն է արեւը քստմենի սճրագործութիւն գործել և ահա ամենապատասխանողիկ ասպարէզ են գայիս այդ հարցը քննելու, ոչ թէ գողը գտնելու և պատժելու համար, որովհետեւ հոգով և մարմնով գողը գողին չի պատժի, այլ իրենց անձնական հաշիւները շտակելու համար:

Ու միամիտ և իսկապէս բարի հայ տարրը՝ որ իր սրտի խորքում մեծ ցաւ է զգում այդ տեսակ սրբապղծութիւնների հանդիսատես լինելով՝ միշտ մնում է շարած. նա նրբութիւնների մէջ մտնելու մտաւոր պատրաստութիւնը չունի. նա չէ կարողանում իրան հարց տալ թէ՛ ի՞նչպէս մի տաճկական լրտես կարող է հայրենիքի համար ցատու սիրունեանալ. թէ ի՞նչպէս Արթին փաշայի պէս Սուլթանին մի հաւատարիմ ծառայ կարող է հայրենասէր լինել, թէ աղատ արտասահմանի մէջ՝ Սուլթանից մի երկու հարիւր ոսկի փրցնելու համար թուրքերէն լրագիր հրատարակող մի խմբագիր ի՞նչպէս կարող է անկեղծ կերպով փրտբերվել զէպի աղբային շահերը:

Միամիտ և բարի հայ տարրը այդ նրբութիւնները չէ հասկա-

նում. նա տեսնում է որ փաշան իրան հայրենասէր է հրատարակում, նա տեսնում է որ լրտեսը՝ ազգասիրական ճատեր է արտասանում, նա տեսնում է որ կեղծարարը յեղափոխութիւն է քարուզում, նա տեսնում է որ Սուլթանից կաշտաք ստանալու նպատակով թուրքերէն թերթի հրատարակող խմբագիրը՝ յեղափոխական կազմակերպութիւններ է ձգտում. և այդ բոլորն ի սէր ազգութեան, ի սէր ժողովրդի. ու մտաւորում է զրանց իսկական պատկերը և ենթարկվում իսկական խաչագոյնների՝ շաքարած խոսքերին:

Բարի և միամիտ հայ տարրը անկարող է ըմբռնել որ կատարելագործված շարլատանների ներքին և արտաքին հոգեբանական ելուէջները բոլորովին հակասական են. արտաքինը մարտի, բարոյական. իսկ ներքինը՝ միշտ և յախտեան վատ:

Եւ այդ պատճառով էլ մեր մէջ շատ անգամ Սրբութիւնը ընկնում է աղտոտ ձեռքերի մէջ:

ՎԱՐԴՈ

## ԹՂԹԱՎՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 21 1/2 Փետրվ.

«Յուզա Իսկարիկագի, համբուրելով զիս մասնեցիր» սու հարցումը բրաւ 19 դար առաջ Գոլգոթայի մեծ խաչեցիալը իր անայժման աչակերտին, որ իր սէրը ծախեց:

Աս նախադասութիւնը ամէն անգամ սարսուռ կազդէ վրաս, երբ կը մտածեմ թէ կան մարդիկ ազգիս ու ժողովուրդներ, որ մեծ խաչեցիալի պէս ամէն շարժարանք, դամ ու իսաչ կը տանին ազատութեան հասնելու համար: Եւ ամէն անգամ սարսուռս պատճառը ան է որ կը հասկնամ, կը տեսնամ թէ ազատութեան ձգտող աս ժողովուրդներու անկեղծ ու անձնուէր զաւակներու կողքէն, անոնց փոքրաթիւ խմբակներ մէջ խառնուած՝ կերթան և բազմաթիւ յուզաներ ամէնքն ալ ազգասիրութեան ու ժողովրդի բարեփոխման կերտներուն առած:

Հաս գարչիլի սողուն մը, Ազրայէլ մըն է որ Արամ Արամեանը կը մատնէ, հոն ստորաքարը մըն է որ Սերորը բերան կուտայ, երրորդ սեղը

տարրեր վատի մը ծնունդն է... երկար շարք մը:

Յուզա Իսկարիկագի, համբուրելով զիս մասնեցիր:

Եւ դու մեծ ազգասէրդ Արթին, դու ճատեան բարձր ընտանիքի ցած զաւակը, համբուրելով դո՞ւ ալ քո ազգը մասնեցիր: Երբեմն ազգասէր ձեռացար, բանակցութիւններու մտար... երբք սիրէմնոց ուզեղ... խառնել կուզէիր:

Այժմ ճիշդ գտար, ինկիր Օրմանեանի գիրկը. համբուրուէ հետը. երկուքդ ալ գործիք եղէք ձեր Գրիստոնէն աւելի շարժարան ազգին ներքին Համբուրի գաղտնիքեան բաժակի վերջին կաթիլներն ալ պարպել տալու:

Այս, ախու՞ր ու գառն է. բայց իրականութիւն է:

Արթին իր սովն արժէքը կորսնցուցած է կատարութեան առաջ. Օրմանեանի պէս երեսէ ինկած եւ «քվաղէ» եղած է:

Բայց դառն է Արթինի համար Սուլթանի երեսէն ինչալը, Այդ տեսակ մարդերը ամեն ինչ կը գոհնեն կորսնցուցած համարումն ին վերստանալու համար:

Այսօր ալ Արթին Պիւլիլիանէ, Մարկոս նախանանէ և քանի մը այլ անձեր իրեն վայել խուճր մըն է կազմեր—գրեւէմերու խուճը:

Լրտեսական խուճր կազմել հէ՞... Արթինի փառքին աս էր պակաս: Ու աս աս փառապսակին ամենէն փայլուն ալ կը կազդէ: Ատոնք Սուլթանին պիտի ծառայեն հայրը աւելի ևս սեղմելու ու ատնջելու համար:

Մարկոս նախանան այսօր տօրէն է Բերայի Եսայան վարժարանի եւ ամսական 10 ոսկի կը ստանայ: Երբեմն իրր ազգասէր քստորուհչաւ Երուազմ... Խեղճ «ազգասիրութիւն» որչափ հրէջներ կը պարակին քստոր ստոր անուանող տակ:

Տղտ տիրացու արարածին մէկն է: Ծնողներն ու թաղեցիները զէմ են, ատանկ տնօրէն մը չեն ուզեր: Հաշիւները քննելու ելան եւ պարզուցաւ որ պատուելի նախանան 30 ոսկի «եղ երթանք» է բրբեր:

Ասկէ աւելի ի՞նչ կուզէք: Բայց դայն հեռացնել վայժարանէն հնար չիղու: Տատեանի զօրաւոր ձեռքը զայն կը պաշտպանէ:

Վարպետ մը իր գործիքը միշտ կը պաշտպանէ:

Աս մարդն է Արթինի նոր կազմած խմբին մէկ անդամը: Մէկալը եւ հա-

ւանորէն խմբակի հոգին՝ Պիւլիլիանէն էֆէնտին է. որու ինչ պտուղը լլլալը ամէն մարդ գիտէ:

Եթէ խմբակին մէկալ տնդաներուն անուաները իմացայ, կը հաղորդեմ և անպատճառ կաշխատիմ այժմանազրել բրած ամէն ազգասիրական սխրագործութիւններն:

Սուլթան սարսուտիւ կովկասի 50,000 հայ զաղթականներու վերադարձի պահանջովը, համաձայնեցաւ Ռուսիոյ արտօնել կարս-Էրզրումի երկաթուղիի գիծը շինել. իսկ մէկ կողմէն պատուիրած է նախարարներուն գործը քաշքշել, ժամանակ վատակիլ, մինչեւ որ Անգղիոյ ձեռքերը ազատին եւ Պոլսոյ մէջ Ռուսիոյ միակ հակակշիռ ուժը տեղը գայ:

Տաճիկ ստիկանութիւնը խոչոր քայլերով կը յառաջադիմէ:

Յովհաննէս Սարուգեան անուն երիտասարդ մը, որ կրենն թէ չըջանաւարտ է նախնի երկրագործական վայժարանէն, երկար ատեն հոս իր մասնագիտութեանը յարմար գործ չը գտնելով՝ վաճառականի մը քով գրագիր կը մտնէ: Անցեալները բազը կը ժպտայ սողուն. Չաթալա կը կանչուի ազարակ մը մշակելու: Իրր իր արհեստին սիրահար՝ զոյգ մը ընտիր աղանի կը գնէ եւ հետը կը տանի սերանդ աճեցնելու համար իր նոր ազարակին մէջ: Չաթալայի ոստիկանութիւնը զինքը ի կոյն կը ձերբակալէ «աղանները լրատար տեսակէն են, կըսէ. եկած ես ու բնի կապիտ հաստատելու աղաններուդ միջոցաւ... Ու խեղճ մարդը ծակը կը նետեն: Մայրը հոս ու հոն կը դիմէ, օգնութիւն չի կրնար գտնել: Վերջապէս կը հասնի աւազակ Տէր ներսէսեանի ոտքը: Աս էֆէնտին 30 ոսկի կը պահանջէ, պատու մօր միակ ապուէնը բանալն հանելու համար: Կրենն թէ մայրը սկսած է փոխառութեան գիմել, մորալ յուզայի այդ 30 արծաթը Տէր ներսէսեանի որկորը նետելու որ՝ իր զաւակը թերես ազատէ:

Ամսոյս սկիզբները հայ վատ մըն ալ պակսեցաւ անչաւտ իմացած կըլլաք, նուրբանը:

Հայու շիրտ ունեցող ամէն անձեր շատ մը անէձք եւ արհամարհանք զրկեցին իրր հոգեհանգստեան աղօթք:

ԲԱԹ

ԹԱԻՐԻՉ, 31 Յունիս.

Խօսակիցս սրտի խորքերից մի ա՛խ քաշելով շարունակեց .

— Սրանից մի քանի օր առաջ դատարանում նկատեցի, որ տաս տարեկան մի երեխայ պատի տակ կծկված անդադար լալիս էր : Իսկոյն մօտեցայ նրան և լաց լինելուն պատճառը հարցրի շատ քնքուշ կերպով : Ինչո՞ւ երեխան սաստիկ է ողբալուց չը կարողացա անմիջապէս պատասխանել : Ձեռքիցը բռնելով ոտի կանգնեցրի և գլուխը շոյելով նորից հարցրի .

— Ի՞նչ ունես, մէկ տեղդ է ցաւո՞ւմ :

Երեխան կարծես ամօթահար, դողդղացող ձայնով պատասխանեց .

— Մտում եմ : . . .

Այս խօսքերից ես ցնցվեցի . կարծես ամբողջ մարմնով ելեկտրական մի ուժգին հասանք անցած լինէր : Թշուառութիւնն ինքն էր որ բողբոջում էր այս անմեղ մանկան բերանով . տպաւորութիւնը շանթահարող էր :

Իսկոյն տարատը վեր վերցրի և ապշած մնացի . . . Խեղճ երեխան ներքեւից վարտիք շունէր . իմ ապշութիւնը կրկնապատկից . երբ նկատեցի թէ ոտերին պուշպոյ և հողին շապիկ չունէ՞ր . . .

Սրտածմիրիկ տեսարան . . .

Ամենաքար սիրտն անգամ չէր կարող չը յուզվել : Թշուառութեան մարմնացումն էր այս տարաբաղդ երեխան :

Երկու կաթիլ արտասուք աչքերիցս դուրս եկան :

Սրտիս ու հոգուս ալեկոծութիւնը հանդարտեցնել ջանալով, երեխայի ձեռքիցը բռնեցի և օրիորդի մօտ տարի : Նրա երեխայական փափուկ սիրտը և զգացմունքը չը վիրաւորելու համար, սասցի .

— Օրիորդի մօտ գնանք, քեզ բան է ստելու :

Ինչո՞ւ երեխան գլխիկոր ինձ հետեւեց :

Օրիորդին մի կողմ հրաւիրելով նրան հասկացրի թէ բանը ինչու՞ն է, և խնդրեցի, որ իսկոյն շապիկ-վարտիք և գուլպաներ հագցնի :

Օրիորդը իսկոյն իմ խնդիրքը կատարեց և երեխան ուրախ սուն մեկնեցաւ :

Այս ախտը գէպքից խորապէս յուզված, հետեւեալ օր բոլոր երեխաներին աչքից անցկացրի և նկատեցի, որ 25—30 չքաւոր երեխաներ զուրկ էին շապիկ-վարտիքից և գուլպաներից : Ինչո՞ւ փոքրիկները . այս անտանելի ցրտերին ստիպված էին կէս ծածկված մարմնով և առանց գուլպայի դատարանի սառ քարերի վրա մնալ . . .

Գիտէք արդէն, որ դպրոցը աղքատ է, չի կարողանում նոյնիսկ իրա պիւտճէն հաւասարակշռել, ամէն տարի 1000—1500 թուման բաց է ունենում և խեղճ հոգաբարձուները հաշար և մի տեսակ գերմարդկային ճիգեր են թափում այդ բացը կոցելու համար, ո՞ւր մնաց, որ աղքատ երեխաներին զգեստ պատրաստեն . փառք Ասուծոյ «Փարիզի Հայկաւր» Ընկերութիւնն էլ բնաւ ուշ չէ դարձնում դպրոցին և աղքատներին : Ուրեմն, մտում էր մեր ոյժերին ապաւինելով այդ գժբաղդ երախաների մերկ մարմինները ծածկել . ահա այդ նպատակի համար կազմեցինք նախորդ օրուան երեկոյթը, որից զոյացած հասոյթը պիտի բաւէ 25.30 չքաւոր երեխաների մերկ մարմինները թէ ներքին և թէ դրսի զգեստներով ծածկել :

— Ծնորհաւորում եմ ձեր յաջողութիւնը, ասելով ձեռքը թոթվեցի և մի թիթարված հեռացայ տեսչի մօտից :

ՄԻՐՁԱ

ՊՐԱՅԻԼԱ, 3 Փետ.

Քաղաքիս ազգային կեանքը շղթայի մը քակում օղակներուն կրնայ համեմատուիլ . շատ յուսահատական է . եկեղեցի մը ունինք Ս. Աստուածածնայ նուիրուած, տարին 400 ֆրանքի հասոյթ մը ունի, մընչդեռ անհամեմատ կերպով աւելի ծախքեր ունի : Հոգաբարձութիւն մը կայ որ անուանական է բառին ամենալայն առումով . ահա երկու տարի է որ պաշտօնի կոչում է և տակաւին գէթ անգամ մը կանոնաւոր գումարում չէ ունեցած և ընդհանուր հաւանութեամբ եկեղեցւոյն և ազգային նպատակներ կարգադրութիւն մը չէ ըրած : Հոգաբարձութեան պաշտօնը փառքի տեղոս մը նկատուած է հոս և անգամ մը այդ ձեռք բերուելով ամեն պարտականութիւն հանդէպ ազգին ոտնակոխելու : Կան բաւական թուով մանր տղաքներ, անոնց մէկ մեծ մասը օտար վարժարաններու մէջ կը դաստիարակուին և մնացածը փողոցներու մէջ կանուէ իր կըրթութիւնը : Եւ երբ ազգային նախնական կրթարանի մը անհրաժեշտ ու կարեւոր պէտքը զգացուելով հարցը մէջ տեղ կը նետուի, ներկայ հոգաբարձութեան քանակապիտը առանց իսկ կարեւորութիւն տալու ամենէն անհրաժեշտին, օր մը յանկարծ խելքին կը փչէ տեղոյս հայոց գերեզմանատան մէջ պահապանին համար «չալէ» մը կառուցանել, մէկ սալոնով և երկու ընդարձակ սենեակով քարոկիր չէնք մը կը կանգնէ : Նախորդ հոգաբարձութեան իրեն յանձնուած խնայողութեան 700 ֆրանքի գումարն, եկեղեցւոյն 400 ֆրանք հասոյթը և քանի մը ծանօթներէ հանգանակուած 1000 ֆրանքի մը շափ գումարը ի մի ձուլելով ծախսելէ վերջը 3500 ֆրանքի հաշիւ մը ցոյց կուտայ

իրբ շինութեան ընդհանուր ծախք : Այժմ եկեղեցւոյն իր 400 ֆրանքի հասոյթէն զրկուած է, քահանան իր ամառաններուն հասրէթը կը քաշէ և ազգը 1400 ֆրանքի մը բեռին տակ մնացած : Ինչի հայերը իրենց լեզուին հետ ստարացած՝ բոլորովին անտարբերութեամբ կը վերաբերուին գէպի ազգային գործերն . օրօրէ կը հեռանան եկեղեցիէն ու հայութեանէն, նախատինք կը համարեն հայկական անուն կրելը, «հայ եմ» բսելը և հայերէն խօսելը և մինչեւ իսկ հայերէն խօսողի մը քով գտնուիլը : Պանդուխտները թէպէտ իրենց մուրթերն լեզուն և հաւատքը ունեցած դասանանքը ըստ սովորականին անապարտ կը պահեն ու կը յարգեն : սակայն ատոնք ալ իրենց անցեալ տարուան անտանելի կացութեան բորբոքումին հետեւն ինկած, սոժամանապէս ամեն բան մոռցած են : Այս վերջիններուն մէջ եպիսկոպոս անհամաձայնութիւն մըն է կը տիրէ . ամեն մէկը իր թմբուկը կը զարնէ : Իւրաքանչիւր անհատ վաթաֆ դառնալու ցանկութիւններ ունի . իրարու գէժ մրցում մըն է կը թագաւորէ ի նպատակ օտարազգիներու : Միեւնոյն խմբին պատկանողներ խիստ շատ անգամ միակ գործի մը վրայ կը մրցին պառակտիչ կերպով մը և այն աստիճան կը կուրեն գինը որ գործատէրերն միայն կը նայատարուին, և փոխանակ ըստ սովորականին եօթը ֆրանք օրականի կը պարտաւորին վերջի վերջոյ 5 և մինչեւ իսկ 4 ֆրանքով գոհանալ : Քիչ շատ դրամատէրներ ալ կը գտնուին անոնց մէջ, բայց որովհետեւ հայրենիք չեն կրնար երթալ անցագիր չի տրուելուն համար, իրենց սովորական աշխատասիրութեամբը նորէն գործի կը ձեռնարկեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇՈՅ ԱՇԽԻՐՉԻ ԵՆՅԲԵՐ, ՊԵՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՆԱԳՈՒՄ

Գ. ՏՐՈՅ Յ. ԻԵՂՈՒՄ

Ըսած էի թէ Սրբի փաշան հայ ժողովրդեան նիւթական վիճակն ևս թնկատի ըստ էր իր պատշաճ փամանակ ըստ այնմ չէր կրնար այդ ուժի գէժ ալ ևս լուել . միմիայն փիւրա ցեղերուն ձգելով հարստահարութեան միջոցներն . ապա ի՞նչ պիտի ընէր, որ Մուլթանական գանձարանն ևս հարստանար, եթէ ոչ չի լուած ու չի տեսնուած տեսակ տեսակ տուրքեր ստեղծել . այդ ալ իրեն համար անկարելի չէր . քանի որ ժամ առաջ

ճնշման և ոչնչացման գլխաւոր հիմունքներէն մէկ կանոնն ալ այդ էր, և անպայման պէտք էր իրագործուէր . միայն փաշային կը մնար կարգադրութեան եղանակներ դուրս բերել, և միեւնոյն ժամանակ ալ հրամաններ արձակել իր ստորագասալ պաշտօնէից, անոնց միջոցաւ գործադրել տալու :

Առանց յապաղման, փաշայէն 14 տեսակ նորեւ անուը իսկ չի լուած արոց անուները դուրս եկան, որք են՝ կանանց և աղջկանց որոշեալ տուրք . ձի . աւանակ, կով և մատակներն ալ տասանորդական արոց կարգին անցունել, դրան . պատուհաններին, հաւի, սագի և այլն : Այդ նոր յատկացեալ արոց մասին յատկապէս, անմիջական հրամաններ արձակուեցան փաշայէն, որ փութկուտութեամբ մը կատարուին, մէկին ի մէկ գործադրել մարմիններ ոտուկաններով մէկտեղ սկսան հայ գիւղեր ցրուել, կէտ սուկէտ գործադրելու միջոցներ ձեռք առնելով, նախ և առաջ արձանագրութեանց սկսանք ըս-

նակութիւնը իմանալու համար . այդ միջոցին ժողովրդեան մէջ իրար անցում մը առաջ եկաւ . մէկ երկու հարցումներ կողողուին թէ՛ ի՞նչ է արդեօք, միթէ կարելի է այդ տեսակ քան մը ըլլալ . արդեօք կատարութեան նպատակն է զմզմ ոչնչացնել : Եթէ այդ տեսակ անիրաւութիւններ իրագործուին, լու է զաղթել, քան թէ այսպիսի վատ սէժիմի մը ներքեւ իրբեւ ստրուկ սպրեւելով ոչնչանալ . իսկ միւս կողմէն, հայ արիւն կրող, խորհող գլուխներ, ուչի ուշով այդ կործանարար և քանդիչ ընթացքին հետեւելով կը սպասէին եզրակացութեան, որ փոխադարձաբար ինչ որ հարկ էր ընել, ընէին, երբէք գալիք հետեւանքէն չի վախնալով :

Թիւրքը՝ մինչ այսօր իր խարխուլ կառավարութեան գոյութիւնը միմիայն բաժանման մէջ տեսած է . օրաժամանակ զի տիրեցին իրենց ան-

պայման հիմունք ընդունելով : Սրբի փաշան որքան որ խորհած էր քակել քանդել Մուշը իր գաւառներով, պիտի չի կրնար իրագործել իր այդ անուելի ծրագիրը եթէ վատ հայու մատը ևս մէջը չի գտնուէր . ուրեմն անպայման պէտք զգացած էր փաշան, լու հայերը կատարական պաշտօնէն հեռացնելով վատերը անոնց տեղ անցունել, իր ձեռքն գործիք գարձուել, որ առանց տեւէ գլուկուութեան մը ուզածն ընել կարենար : Դեռ իր կործանարար ծրագիր դուրս չը բերած նախ և առաջ ձեռնարկեց լուելը չեղոքային . ինչ որ խորհած էր նոյնութեամբ գործադրել . իր թրքական աղպիտի քողի մը ներքեւ որ հայերն չի կրցանք նախատեսել : Նոյն միջոցին էր որ Մուշը իր երկու քաղ ևս հաստատ կամքի սէր կարիսկողոտներով կը պարէր, իրենց օգնական լուել նալով այն միջոցի պահանջմանց համաձայն յաղաքական ժողով մը, որ առանց վարանման կընէին այն ինչ

նարկեն, և սակայն չի կրնար գիտցուիլ թէ ինչ պատճառաւ միշտ բնականութեան ու վախճանութեան յարած կը մնան և չեն վերածեր քիչ մըն ալ տարբեր ճիշդի մը մէջ իրենց բախտը սրտնելլ ինչ քան է որ մայրե. նիք կրկրեն, ոտքերնին գուրս նե. ապա օրէն իրենք իրենց դատա. պարտութեան վճիռը կուտան բեհեմալութեամբ և անգործելի յամառութեամբ մը կը շարունակեն մինչեւ իրենց խոր ծերութիւնը, որ աւագ, խիստ շատ անգամներ կարծուածէն աւելի վաղահաս կըլլայ երիտասարդ տարիքի մէջ քամակի անսովոր կորութեամբ:

Արդ՝ քանի որ բնականութեան մէջ կըլլիացած այս խեղճ պանդուխտներէն ինքնաբերաբար նոր բան մը սպասել կարելի չէ, կարծէ որ բնական շօշուօքը քրքրուիլ անոնց կացութեամբն և խորհիլ մշտնջեր անոնց վիճակին ու ապագային բարեբան համար:

Հոս բնականութիւն մը 7 ֆր. օրական կը ստանայ կառավարական որոշման համաձայն, և սակայն ամառ առանձին 8էն 10 օր հաղիւ կրնայ գործ գտնել. հետեւաբար ենթադրելով որ ամիսը վրայէ վրայ 10 օր բանի և 7 ֆր. օրական առնէ, ամիսը 70 ֆր. կրնայ շահիլ ինչ որ միայն իր պէտքերուն և տանտանի կրնայ բաւել, մանաւանդ Ռուսիոյ պէտ սուղ երկրի մէջ: Իսկ ձմեռը ամբողջ չորս ամիս Գանուբի գոցուած ժամանակ իր առօրեայ ուտեստը անգամ չի կրնար վասակիլ, և երբ անցած տարուան պէտ վատ տարի մըն ալ վրայ հասնի, ալ անոր գործը լմնցած է, ալ բոլորովին անթիւ ու մերկ կը մնայ: Ինչպէս որ էր այս ձմեռ, ի բաց թողլով այն պարագան թէ Թուրքիոյ մէջ տիրող հալածանքէն ու կոտորածէն ամեն օր

միախտականներու ստուար թիւ մը կաւելնայ բնականութեան արդէն հո՞ծ խումբին վրայ, որով թէ՛ օտարականներու անկում և թէ՛ զործերու համեմատական նուազում յստաջ կուգայ և հե. աւելարար պարիլ ու պարեցնելու անկարելիութիւն:

Վերսե ինչ որ մէջ բերուեցու Ռուսիոյ մէջ գործող բնականութեան նկատմամբ, Պուլկարիոյ մէջ զանուոց բնականութե. րու վիճակը ալ աւելի վատթարացոյն է:

Արդ՝ այդ խեղճներուն համար անհրաժեշտ է խորհիլ ու գտնել նոր գործեր ու երկիրներ ուր կարենան աւելի նպաստաւոր պայմաններու տակ գործել ու շահիլ, սպրիլ ու ապրեցնել ի թէ չենք ուլեր որ օր մը բոլորն ալ կորսուելու մատնուին թէ՛ բարոյապէս և թէ՛ նվախապէս:

Հայ ժողովուրդը մանաւանդ Պոլսոյ վերջին ղէպքէն ի վեր ամեն կողմ իր բարեւէր ներկայացուցիչները ունի. կը խնդրուի բոլոր անոնցմէ որ աղագոսիրարար շահագրգռուին մեր պանդուխտներու հացի խնդրովը, ուսումնասիրելով իրենց գտնուած երկիրներն և խմբագրութեանց տեղեկագրելով թէ մեր գաւառացի եղբայրներուն համար ինչ գործեր ու աշխատութիւններ կրնան գտնուիլ իրենց շրջանակներուն մէջ, որ շարունակաբար և առանց ընդհատման տեւեն ամբողջ տարին, թէ՛ ինչ օրական կամ ամսական կրքնայ սոսցուիլ և թէ ինչ տեսակ աշխատութիւն կը պահանջուի: Այս դրամական նպաստ մը չէ որ կը խնդրուի, այլ պարզ ձեռնտուութիւն մը, որուն ամեն հայ անհատ իմաստուն թէ անուս վաճառական թէ արհեստաւոր, հարուստ թէ աղքատ պարտի հաւասարապէս և անթերի մասնակցելի:

Այս առթիւ կանխելով քան ամենքը հետեւեալ ստաշարկը հրապարակ կը նետենք, թողլով աւելի կարող անձնաւորութիւններու անոր զնահատումը:

Անգղիա Թրանսվալի պատերազմին պատճառաւ ամեն օր հազարաւոր զինուոր Ափրիկէ զրկելու հարկին մէջ է և նոր գտնուելու կազմակերպութեան համար ժողովուրդը կը պիտոտարգէ և այս զինուորագրութիւնը անտարակոյս պիտի շարունակուի այնչափ որչափ պատերազմը տեւէ. իսկ պատերազմին քիչ ատենէն վերջաւորութիւնը անտող նշաններ կատարելապէս կը պակսին: Արդ՝ զինուորագրութիւնը ամենամեծ մասամբ անգղիացի գործաւորներուն մէջ կատարուի, որով հանքածուխի վրայ աշխատող գործաւորներէն մաս մը կը պակսի հաւանականաբար. մինչդեռ՝ դարձեալ միեւնոյն պատերազմին պատճառաւ հանքածուխի աւելի մեծ սպառում մը ըլլալով անբաւական արտադրութիւն մը և այդ պատճառաւ գիննրու բարձրացումէն ամբողջ աշխարհի արհեստագործութիւններն հանքածուխի մեծ և ամենատեսակալի տաղնապ մը կանցնեն:

Արդ՝ քանի որ գիտենք թէ Անգղիա է ամբողջ աշխարհի հանքածուխի ամենէն մեծ մատակարարը, արդեօք կարելի չէ որ Անգղիոյ մէջ հաստատուած և ամենաընդարձակ յարաբերութիւններ որպիսին է ի մէջ այլոց Տեար Մինաս Չէրազ՝ ձեռներեցութիւնն ունենան այս իմաստով յարաբերութեան մանկ ածխահանքի տերերուն հետ և անոնց հաճութիւն ստանալ 3—400 և եթէ կարելի է աւելի իսկ հայ գործաւորներու հանքերուն մէջ աշխատութեան: Այս կերպով վտանգ կրնան ըլլալ այժմէն թէ ամենամեծ բարիքն ըրած կըլլան

հայ պանդուխտներուն, անոնց հացը ու ապագան միանգամայն ապահովելով:

ԿՇԻԹ

Մ Է Զ Է  
(ԱՐՅԲԱԿԱՆ ՉՐՈՅՑ)

Անպատի կրկնաւազներուն վրայ վերջին կարաւանի թողած հետքերուն հետեւելով շարունակենք քաղել սակաւին. սակայն ամսուս, մեր աչքերը չեն կարող երկար հետեւիլ այս կրաւաններու հետքերուն, վասն զի «Սիմուս»ը կրակող հովր, համահասար բրած է. դառնորդ ու Մէքքէի ուխտաւորները թաղած այս սարսեցնող սմայութեան մէջ:

Հիմայ վասնզը ալ վերջացած է. արեւելեան զեղեցիկ գիշերը կուգայ տարածել իր մութ թեւերը երկնքի վրայ ուր կը վայլի աստղ մը եւ իր մաքուր լոյսով կը լուսաւորէ այս աւազէ ծովը: Այս աստղը Մէքէն՝ այն թուի աղջիկն է որ մենմիտակ մեկնեցաւ հաւատացեալներու քաղաքի ճամբուն վրայ կորսուած հայրը գտնելու եւ անոր օգնելու: Սակայն ինքն ալ մոլորեցաւ. խեղճ աղջիկ, եւ երեք երկար օրերէ ի վեր իր օղբի արձագանքը կը հնչէր անպատի խորէն. կը թափառէր նա անգիտելի գիւմարելով անօթութեան, հրատոչոր ծարաւին եւ չի վախարով անպատի թագաւորէն, որուն կատաղի մոռնիւնը կը թրթոցներ իր սկանչները: Կը զեղեցիկ ու կը միմնչեւ՝ ո՛վ Աստուած իմ, ամենակարող եւ ուղործած Աստուած, վերադարձուր ինձ այն, զոր պարգեւ ի՞ր իբր հայր. ա՛ն իմ կեանքս անոր փոխարէն, մի թողուր որ անգութ մահը ըլլայ անոր այնքան առաքելութեան եւ փառքի վարձատրութիւնը:

Աւագ անօգուտ աղօթքներ... որուն համար որ կը պաղատէր՝ արդէն մեռած էր:

Երբորդ գիշերը հովը բարձրանալով աւելց Մէքէի շուրջ գտնուած աւազները. եւ նա կրցաւ նմարել իր հայրը ու ամբողջ կարաւանը գետնի վրայ պահկած, յաւտեանական քուրնով քնացած:

Այն ատեն հաւատացեալներու Աստ-

որ աղագային շահերն կը պահանջէին, Այդ եպիսկոպոսներէն Գեր. Մամբկոնեան Մամբէ Սրբազան, Սուրբ կարապետի գահու վրայ քաղցած, իսկ Գեր. Ալաթեան Սրբազան. ընդհանուր քաղաքական առաջնորդ Մշոյ:

Այդ կը նախատեսէր փայան, եւ գիտէր որ ընդգրկուածներն մը պիտի հանդիպի այդ քաղաքի եպիսկոպոսներու կողմէն, ատոր համար ալ կը զգուշանար անխոհեմ քաջ անուելու. ինչ որ կընէր, չափէն դուրս գազանի կը պահուէր որ չըլլայ թէ զլուխ չեւած, իր քանդիչ ծրարիք վիճէր և Սուրբանի տաջու պղտիկ մնար:

Հա՛ գաւաճանները պատօնի պիտի անցունելը շատ գիւրիւն էր փաշայի համար: Թէ ինչպէ՛ս վասերը Գիթլիւ՝ իր քով կանչելով, ամէն անակ պաշտօններ խօստայտ, այն պայմանաւ որ, որքան կրնան երկպառակութիւններ օր անոյ գուրս բերեն ժողովրդեան մէջ, նախ եւ ապա Գեր. Մէքէան Սրբազանի գէ՛մ ժամառաջ Մոզէն հեռապնդու:

Թիշալ Սրբազանը օրէնքի տրա-

մագրութեանց համաձայն կատալարութեան և թէ տաճկաց ապօրինի ընթացքի գէ՛մ իրիտ հակառակ էր. եւ սարսեցուցիչ ազդեցութիւն գործած էր վրանին, և չափէն դուրս կը վախնային անիէ. հասարակութիւնն ևս իր կողմ ըլլալով, շատ պարզ էր. որ փայան այդ տեսնելով ու իր ծրարի նոյնութեամբ չի պիտի կրնար իրագործել:

Գասպրութեամբ լեռնաւորուած հայ գաւաճաններ Գիթլիւն վերադառնալով, սկսած սպտա համարձակ գաւառներու մէջ պտտիլ երկպառակութիւն սերմանել և Սրբազանի գէ՛մ գաւաղութիւն սարքել. նոյն միջոցին Ալաթեան զիւրի գէպքը վրայ գալով կատալարութիւն և Մշոյ առաջնորդարան իրար ինչպէս երկուստեք հեռապիտեւր սկսան տեղալ Բ. Գուսն և Պատրիարքարան: Ինչ էր այդ գէպք և ինչո՞ւ համար այդպիսի ծանր կերպարանք առաւ, որ Մուշ և Գիթլիւ մը չի կրնալով խաղաղութեամբ լուծել Բ. Գրան և Պատրիարքարանի կը գիմուէր մէկմէ-

կու գէ՛մ ազդու կերպով բողոքելով:

Լ հա թէ ինչ էր, Չիւնուրական հազարապետ մը իր ընտանիքով 20—30 հորքով Գիթլիւ կողմերէն գալով, Մուշէն 1 1/2 ժամ հեռաւորութեան վրայ Ալաթեան հայ գիւղ կուգէ գիւշերել, հայերը իրեւ հիւր սիրով կընդունին. երբ իրենց հիւրանոցներու մէջ կը զեւեղուին ատոնք, նոյն միջոցին կը սկսին բռնի ձեւով տեսակ տեսակ պահանջներ ընել և շատ մը հայհոյանքներ իրենց բերաններէն թափել: Այդ տաճկական զազանային ընթացքն ծայրայեղութեան հասնելով, այլ ևս հայերը չեն կրնար դիմանալ, ընդհարում մը կը սկսի մէջերին. հազարապետը և զօրքերը լաւ մը կը ծեծուին և գիւշերով փախչելով Մուշ, կը բողոքեն. մի թէ սարիք և զօրայ հրամանատար բարկանալով գունդ մը զօրք կը զրկեն գիւղը: Նոյն միջոցին Մշոյ գատախազը Խնուսցի Տիրացուեան Յակոբ Էֆլուտին էր. մի թէ սարիք կը պնդէ գատախազին երթալ քննութիւն կատարելու զօրաց հետ. խըն-

դիրը ծանր և միանգամայն ազգային ըլլալով, պէտք էր առաջնորդարանին ևս անգեկութիւն տալ. այդ իրենց հաշտին չէր գար, իսկ գատախազը ինչորոյն կարեւորութիւն չը տալով, զօրքի առջեւ անցած կուռոյ վայր կիջնէ. երբ այնտեղ կը հասնին, հրամանատարը գիւղը պաշարման մէջ առնելով հրաման կընէ ամէն անտակ դէշութիւններ ի գործ դնել. և զօրքերը փախչանքով չօգ եւաշա պոռալով գիւղի մէջ կը լեցուին. կողպուտ, սուռանգուած, յի կանանց վիճում և մարդոց վիրաւորում առաջ կուգայ: Այդ բարբարոսութիւնները կէս գիշերէն սկսեալ մինչեւ առաւօտ կը շարունակուին. իսկ առաւօտուն քսան հայու չափ բռնելով Մուշ կը բերին և կը բանտարկեն. միւս կողմէն ալ կանայք վիճած գաւազներն հետեւին ստամ առաջնորդարան կը լեցուին:

ՄԱԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ,  
(Շարունակելի):

ուսան գլխավոր այս մարտի և անուշ արարածին՝ իր գրաստան հրեշտակ մը զրկեց անոր ըսելու՝ «Տղա՛յ, եկուր ինձի հետ, քու պաղատանքներդ լսելի եղան վերը և որդիական մեծարանքդ պիտի ընդունի իր վարձատրութիւնը. մշտապէս պիտի միանաս անոր, որուն համար կուրաս... Եւ անհետի իր թեւերուն մէջ փոխադրեց զայն երկինք, ուսկից երեւաց փառլիուն աստղի մը պէս ու գիշեր ասան կը լուսաւորէ անպատէն անցնող խեղճ ճամբորդները»

Թարգմ. Ֆր. ՎԱՐԴԱՆՈՒՇ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէև գաղթականութեան դժուրակ վիճակը չը ներքեր երբէք ուշ դնել անտեղի յարձակումներու... սակայն «Շարժում» թիւ 205 «Ստախոսներու» խորագիրը ստիպեց զիս գրիչ ձեռք առնել: Բայց մտադիր եմ կարգաւ սկսիլ արդ նախ կը հարցնեմ՝ Պ. յօդուածագիրին, աւելի լաւ չէ՞ր լինէր փոխանակ հունգարական... առանցքով խօսելու (որն որ բացայայտ կերպով կը մատնէ. իր ուրիշի մը ձեռք գործիք եղած լինելը), ուշաբերի և փոխանակ քննադատի հովեր առնելու, իր կողմէն վեր չը բարձրանայ (ինչպէս կըսէ ոչ թէ հունգարական այլ հայկական առածը): Պարոն «Բնութեան տակ» Շ. Կամարականը հակառակ ձեր կարծածին ձեզմէ շատ և շատ բարձր մէկն է (թէև իր մէկ երկու յայտնութիւնները ինձ ալ անախորժ թուած է իր վիպակին մէջ) և իր պատկերը գրելու համար երբէք պէտք չունի ինձ կամ ուրիշի դիմելու, ինչպէս կարծած էք դուք, ձեր գուշակի յատուկ տաղանդովը. իսկ գաղով իր վիպակին իրողութիւն ըլլալը կամ չըլլալը կարգացող և հասկցողները կրնան գնահատել: Հեղինակ մը կրնայ իր ուղածին պէս ստեղծել և գրել զէպոքեր, թէև անոնք գոյութիւն չունենան, միայն թէ կը բաւէ որ իր գրածը ու է կերպով օգտակար հանգիստանայ հասարակութեան. թէև ձեզ պէս շատ բարձր բաներու խելքս չը հասնիր բայց անշուշտ պիտի հաճիք պատասխանել երբ հարցնեմ թէ, Բաֆֆիի Որսորդ, Աւօն, Մարօն, Կարօն, Աւլանը և այլն. իրողութիւններ ե՞ն, իսկ գաղով այն կարգ մը յարձակումներուն որով պարոնը ուղքը ինձ կուղղէ, հակիրճ կերպով պատասխանելու պարտաւորուած եմ. այո՛, պարոն, ես «օժանդակ» խմբի վարչութեան արտաքրուած եմ, բայց «ոչ թէ իմ ու է» ստորու կեղտոտ արարքներու համար, որն որ գիտնալով կը ստէք և այն ալ մամլոյ միջոցաւ, և ես աներկբայ եմ որ ձեր խիղճն իսկ կը վկայէ այդ: Այլ ձեր և ձեր 1 — 2 արժանաւոր ընկերներու էնթրիքներուն զո՛հ գացի, որովհետեւ ինչպէս մեր խմբի ծրար

դիրը կը արամադէր, պէտք էր անշատ գործէինք և մեր գործելու վայրը հայրենիքի մէջ պէտք էր լինէր, իսկ երբ անշատ գործել անկարելի լինէր պարտաւոր էինք, մեր ազգային յեղափոխական կուսակցութեանց ամենէն արժանաւորին յարիլ. այդ ստեղծեա ձեր ակնարկել ուղած անձը իբր վարչական անգամ և գործակատար, արտօնուեցայ «Գաշնակցութեան» հետ, բանակցութեան մասնի ինչպէս ուրիշ մը «Արփիարականաց» հետ. այդ պարագային պարզապէս ես աշխատեցայ (բայց իբր հայ և հայուն ցաւերուն գիտակից, համազումով ոչ թէ իբր կոյր գործիք) Գաշնակցութեան յարեցնել խումբը, իսկ դուք և ձեր ընկերներ Արփիարականներ դուք յաթող հանդիսացաք ճիզոյթի մար (ինչպէս ձեր վարպետը Արփիար): Մինչև այն օրը երբ իմ անթիւ անհամար աշխատութիւններով հաւաքած 25 Գաղթական ոսկին յանձնեցիք զմասնին ձերոյ:

Ոչ նուազ ծեծաղս շարժեց նաև այն պարբերութիւնը՝ որով պարոնը ոչ թէ յեղափոխութեան և այլն տեղեակ մէկը այլ նոյն իսկ հայ ըլլալու և կը կասկածի. այդ մասին ալ պարոնը իր և իմ մասին բաղդատութիւնը թող իր սիրելի ընկերներուն հարցնէ. այն ընկերներուն որոնք այսօր Պուլկարիա չեն և նոյն իսկ այսօր, վստահ եմ որ իրմէն աւելի զիս կատեն, վասն զի մինչև վերջը իրենց թերութիւնները ձեզ կամ եմ սուանց «խաթր կէօնիւլ» ընելու:

Պարոնը, Վառնայ գալու և այլնի խօսքեր ըրած է սակայն թե՛ զվստահ լինի որ երբէք չեմ զիջանիր:

Օ. Խ. Կոնստանտնուպոլ

Տօպրիչ, 18 Փետրուար

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մեզ կիմացնեն թէ Պ. քաղաքի մէջ 28 սնտուկի խնդիրը շահագործելու համար կազմուած յանձնախումբը բաղկացած է չորս հինգ զուգի արարածներէ, որոնց պարզութիւն է 1890 թուականի Պօլսոյ յեղափոխականներէն մին՝ ժամադրած մը: Այս շահագործումը վարպետութիւն յառաջ տանելու համար Վառնայէն հոն մեկնած են, ըստ «Սիւլ» թերթին մէջ տպուած տաճկական լրտես Ֆր. Գալիչի նամակին, լրտեսութեան թեկնածու հոշակաւոր Տիգրան ձգնաւորեան և ասոր սրտակից բարեկամը 1000 ոսկինոց բօլիցա մը կեղծելու մէջ մեղադրուող, Վառնայի բանտին մէջ քանի մը ամիս պառկած և վերջերս միայն

երաշխատութեամբ ազատուած մինչևե դատը տեսնուիլը, գասայ Զարեհ Պէշիբեան:

Այս երկու բարի ծաղիկները մանաւանդ ձգնաւորեան՝ յայտարարած են թէ իրենք զրկուած են Ձայն Հայրենեացի, Արմենիայի և Վառնայի Եղաճաճիէն խմբագրուած թերթին կողմէն քննելու Եղաճաճիէն հրատարակ նետած 28 սնտուկներուն իւրնադիրը:

Իրաւ որ այդ թերթերը, Տիգրան ձգնաւորեան և Զարեհ Պէշիբեան իրար լաւ գտած են:

Եւ այս արարածներն են որ ազգային շահերը պաշտպանելու ելած են:

Սուլթան Համիտին աչքը լոյս, հայ ժողովուրդը անոր համար հրէջներու մեծ լէզէօն մը ծնած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Իսկիւպի մէջ գործերը հետզհետէ լուրջ կերպարանք կստանան. Ալպանացի գլխաւորները կը հրաժարին քննիչ յանձնաժողովին ներկայանալէ: Մօտ 4000 ալպանացիներ հաւաքուած են մզկիթի շուրջը: Մահմետականներու խանութները գոցուած են: Զօրքը զիւրբէն եկող ալպանացիներուն կարգիլէ քաղաք մտնալ:

Ամերիկեան թերթ մը կը հազորդէ թէ Միացեալ Նահանգներու, նախագահը երկու պարբերազմով կառավարութիւններուն ալ յայտարարած է որ ինք պատրաստ է միջամտել Թուրանի սպառնալի վերջ տալու, եթէ իրեն միջամտութիւնը կընդունուի:

Պրիւքէլէն հեռագրով կը հազորդէ թէ Թուրանի սպառնալի ներկայացուցիչը յայտարարած է որ Պօէրները պատրաստ են հաշտութիւն կայացնել, եթէ իրենց անկախութիւնը պահպանուի:

Պօլսէն Փետա. 20 ին կը հեռագրեն թէ Իւսթիւպի մզկիթին քով հաւաքուած 2000 ալպանացիներ որոշած են պահանջել նահանգապետ Հաֆի փաշայի հեռացումը: Քննիչ յանձնաժողովը զեռ ոչ մէկ եղբակացութեան յանգած է:

Իւսթիւպի մէջ զմզմներու համախմբումները զեռ կը շարունակուին. հակառակ ասոր կառավարական շրջանակներու մէջ համոզուած են թէ շուտով ամէն բան պիտի խաղաղի: Շուկան զեռ եւս գոց է:

Մարշալու Բօպէրտու Մօտէռի քովերը յարձակեր է պօէրներու վրայ, բոլորովին յաղթեց և այժմ կը հետապնդէ:

Բօպէրտու փետր. 24 ին կը հեռագրէ թէ թշնամին բոլորովին յաղթուած է և կը նահանջէ. մէնէրալ Ֆրէնչ կը հետապնդէ: Փարիզի մէջ հրդեհուած է

«Թէաթր Ֆրանսէզ»-ը: Դերասանուհիներէն մին, որ փորձ կընէր այրուած է բոլորովին. կան նաև վիրաւորուածներ:

Լօրտ Բօպէրտու կը հետագրէ թէ Բրիւկէր և Շաէյն նախագահները, որոնք 23 ին ճակատամարտին ներկայ եղած են, ամէն ճիգ թափած են պօէրները հաւաքել, բայց անկարելի եղած է, որովհետեւ պարտութիւնը կատարեալ էր:

Թայմը կը գրէ թէ պօէրները 23 ին մեծ անյաջողութիւն կրեցին և սպացուցին թէ անընդունակ են Լօրտ Բօպէրտուին յառաջանալուն արգիլել: Օրանժի պօէրները պատրաստ են անձնատուր ըլլալու և յոյս կայ թէ նախագահ Շաէյն, որ պատերազմի հակառակ էր, շուտով իր հնազանդութիւնը կը յայտարարէ:

ՆԱՄԱԿ ԱՍՏՈՒՓ

Վերջին Անանիսի մէջ, այդ ազգային և գաղափարական եզակի ամսաթերթի մեծ խմբագիրը իր հանձնարիւն և զիրիւն վայել մի քանի արհամարհական սողեր ուղղելով Շարժումին, անմիջապէս մեծ մարդկանց մեծ սխալն է գործուիլ և միահապիւն մեղադրուիլ զորո՞ւմ կողմը քսցատու թիւն տալիս այդ արհամարհելի թերթի մէջ գրվածին: Այդպէս, մեծ շանճար (քաղաքական սխալ չէ) ինչպէս թիֆլիզցիք են սուս՝ սխալքի արի՛, պարուն:

Այստեղ աւելորդ չենք համարում նկատելու որ այդ մեծ հակասութիւնը մեծ խմբագրի մտաւոր հիւանդութեան արդիւնքն է. խորհուրդ կը տայինք զիմելու Փարիզի հոշակաւոր բժիշկներին. իսկ եթէ անբուժելի միայ, Շարժումի պաղտուշիքը, գոնէ մերթ ընդ մերթ, կը սթափեցնեն և զոր բորբոքված ուղեղին մի փոքր գովութիւն տալով այնտեղ տիրող քառային վիճակը մի փոքր կը կարգաւորեն:

Աստուած մեղքերին թողութիւն տայ. այս մեղադրանքը այնքան զգածուած է գրել որ անբուժելի չի մնայ:

Յ. ՃԱՆԿԻԿԵԱՆ

ՆՈՐ ԲՍՏՈՒԱՆԻ ԾԽԱՎԱՅԱԿԱՆՈՑ Թիւ 389 Իսկիչե-պաշի

Կր վաճառուի ծխախոտ, բոսխայի և ազերազգրի ամէն տեսակ բուլբուր նաև զանազան տեսակ սիկարետեր: Թէ թուականին հրատարակ ելած Պուլկարիոյ գահաժառանգ Պօրիսի պատկերազարդ քաթ-փօսթալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս և կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաև նամակատան գիմաք նոր քցուած փոքրիկ գրատուներ:

Նաև Շարժումը կը ծախուի Ա. Զարրահէլիանի գրատուներ և իւրմարագրութեան մէջ: